



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 1963-Ա/2

«17» հոկտեմբերի 2024թ.

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1704-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ
հոդվածների 1-ին մասերի պահանջով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022 թվականի
սեպտեմբերի 22-ի «Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական
աշխատողների վերապատրաստման չափորոշիչը և օրինակելի ծրագիրը հաստատելու
մասին» N 1704-Ա/2 հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն
հավելվածի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝

Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2024 թվականի
հոկտեմբերի 17-ի N 1963-Ա/2 հրամանի

«Հավելված

Կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարի 2022 թվականի
սեպտեմբերի 22-ի N 1704-Ա/2 հրամանի

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ՉԱՓՈՐՈՇԻՉ ԵՎ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

1. Ներածություն

1) Մանկավարժական գործունեությունը պահանջում է գիտելիքների և մասնագիտական կարողությունների անընդհատ բարելավում: Այդ նպատակին է ուղղված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պարտադիր վերապատրաստման գործընթացը (այսուհետ՝ վերապատրաստում), որը, որպես շարունակական կրթության ապահովման անբաժանելի մաս, կոչված է նպաստելու ներկա կրթական բարեփոխումների իրականացմանը և կրթության որակի բարձրացմանը:

2) Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների (այսուհետ՝ մանկավարժական աշխատող) մասնագիտական զարգացման դասընթացում մեծ տեղ է հատկացվել մանկավարժական գրականության մեջ դաստիարակության և ուսուցման ժամանակակից տեսություններում արժարժվող այն հարցերին, որոնք վերաբերում են հատկապես դաստիարակության և ուսուցման արդյունավետ պայմանների ապահովմանը և ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործընթացների արդյունավետության բարձրացմանը, ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման գործընթացներում անհատական և տարբերակված մոտեցումներին, սաների տարիքային և անհատական հոգեբանական առանձնահատկություններին:

3) Վերապատրաստման այս դասընթացին հատկացվում է 90 ժամ:

2. Վերապատրաստման նպատակը և խնդիրները

4) Վերապատրաստման նպատակն է զարգացնել մանկավարժական աշխատողների մանկավարժական կարողունակությունները, ապահովել շարունակական մասնագիտական զարգացում:

5) Վերապատրաստման խնդիրներն են՝

ա. ծանոթացնել մանկավարժական աշխատողներին կրթության բնագավառի՝ իրենց գործունեությանը վերաբերող օրենսդրությանը.

բ. ծանոթացնել նորագույն կրթական տեխնոլոգիաներին, դաստիարակության ժամանակակից մեթոդներին և հնարներին, նպաստել դրանց կիրառմանը.

գ. ծանոթացնել Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին, նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերին, հիմնավորել ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացը դրանց պահանջներին համապատասխան կազմակերպելու անհրաժեշտությունը.

դ. նպաստել մանկավարժական աշխատողների ինքնակրթության և շարունակական զարգացման գործընթացին.

ե. ծանոթացնել մանկավարժական աշխատողներին գիտամեթոդական գրականությանը, նրանց մեջ ձևավորել պատկերացումներ ժամանակակից չափորոշչային և ծրագրային պահանջների վերաբերյալ.

զ. մանկավարժական աշխատողների մեջ ձևավորել պարապմունքների պլանավորման և իրականացման գործընթացում ուսումնաօժանդակ, գործնական աշխատանքների ու տեխնիկական միջոցներով կոնկրետ ուսումնադաստիարակչական խնդիրներ լուծելու հմտություններ.

է. նպաստել մանկավարժական աշխատողների կողմից ուսումնադաստիարակչական աշխատանքների գործընթացում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառմանը.

ը. խթանել ուսումնադաստիարակչական և մեթոդական նյութեր մշակելու, պարապմունքներ պլանավորելու և անցկացնելու, պարապմունքներ վերլուծելու և գնահատելու՝ մանկավարժական աշխատողների կարողությունների զարգացումը:

3. Ակնկալվող արդյունքները

6) Դասընթացի ավարտին մանկավարժական աշխատողը պետք է իմանա՝

- ա. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչի հիմնական դրույթները,
- բ. նախադպրոցական կրթական հիմնական ծրագրերը, նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաները,
- գ. նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային և մանկավարժական հոգեբանության առանձնահատկությունները,
- դ. մանկավարժական աշխատողներին ներկայացվող պահանջները:

7) Դասընթացի ավարտին մանկավարժական աշխատողը պետք է կարողանա՝

- ա. սաների մեջ ձևավորել ճանաչողական հետաքրքրություններ և սովորածը գործնականում կիրառելու հմտություններ,
- բ. նպաստել սաների ինքնասպասարկման, ինքնակառավարման և նախաձեռնողական կարողությունների զարգացմանը,
- գ. պլանավորել իր գործունեությունը և սահմանել ուսումնադաստիարակչական աշխատանքի նպատակներ՝ հաշվի առնելով սաների անհատական առանձնահատկությունները,
- դ. գործընթացում արդյունավետ ներառել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաներին,
- ե. կիրառել առավել արդյունավետ տեխնոլոգիաներ՝ ապահովելով տարբերակված ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում,
- զ. կատարել սաների զարգացման և կրթության ընթացքի դիտարկում և գնահատում, տրամադրել հետադարձ կապ ուսումնադաստիարակչական աշխատանքների իրականացման ընթացքում, կատարել ստացված արդյունքների վերլուծություն և մշակել ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման արդյունավետ ուղիներ:
- է. համագործակցել գործընկերների հետ, կատարել փոխայցելություններ, վերլուծել մանկավարժական աշխատողի գործունեությունը՝ փորձի փոխանակման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով.
- ը. համակարգել, մեկնաբանել, ներկայացնել և վերլուծել տեղեկույթը, օգտագործել իր ձեռքբերումները ուսումնադաստիարակչական աշխատանքներում.
- թ. շարունակաբար, այդ թվում՝ ինքնակրթության միջոցով, կատարելագործել մանկավարժական գիտելիքներն ու հմտությունները.
- ժ. ստեղծել հարգանքի և փոխըմբռնման վրա հիմնված բարենպաստ կրթական միջավայր, հաստատել հաղորդակցման ազատ ու բարեկիրթ մթնոլորտ սաների, նրանց ծնողների (օրինական ներկայացուցիչների), գործընկերների հետ՝ պաշտպանելով սաների իրավունքները:

- 8) Մանկավարժական աշխատողը համարվում է դասընթացն ավարտած, եթե՝
ա. մասնակցել է յուրաքանչյուր բաժնին հատկացված ժամաքանակի առնվազն 2/3-ին,
բ. յուրաքանչյուր բաժնի ամփոփիչ աշխատանքից ապահովել է առնվազն 75% արդյունք,
գ. ներկայացրել է պահանջվող չափանիշներին համապատասխան հետազոտական աշխատանք,
դ. հավաքած միավորների ընդհանուր գումարը կազմել է առնվազն 9 միավոր:

4. Մանկավարժական աշխատողների վերապատրաստման օրինակելի ծրագիրը

- 9) Վերապատրաստման ծրագիրը կազմված է 7 բաժիններից՝ հետևյալ համամասնությամբ.
ա. «Նախադպրոցական կրթության բնագավառի օրենսդրություն» 8 ժամ - 1 միավոր.
բ. «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում» 10 ժամ - 1 միավոր.
գ. «Տարիքային հոգեբանություն» 16 ժամ – 2 միավոր.
դ. «Համընդհանուր ներառում» 8 ժամ - 1 միավոր.
ե. «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական արդյունքների գնահատում» 8 ժամ - 1 միավոր.
զ. «Նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաներ» 35 ժամ – 3 միավոր.
է. «Հետազոտական աշխատանք կատարելու սկզբունքները» 5 ժամ - 2 միավոր:
10) Հետազոտական աշխատանքն իրականացվում է վերապատրաստման ամբողջ ընթացքում:

5. Մանկավարժական աշխատողների վերապատրաստման օրինակելի ծրագրի բաժինները

- 11) «Նախադպրոցական կրթության բնագավառի օրենսդրություն» բաժնի բովանդակությունը.
ա. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական գործընթացի մասնակիցների իրավունքների ու պարտականությունների ներկայացում,
բ. Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչ,
գ. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրություն,
դ. Նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկը և պաշտոնային պարտականությունները:

12) «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում» բաժնի բովանդակությունը.

ա. Տեքստային խմբագրիչի գործիքակազմը,

բ. Շնորհանդեսների ստեղծում և խմբագրում,

գ. էլեկտրոնային փոստի ստեղծում և վարում,

դ. Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ,

ե. Կրթական կայքերը, օգտագործման առանձնահատկությունները, ընձեռած հնարավորությունները:

13) «Տարիքային հոգեբանություն» բաժնի բովանդակությունը.

ա. Նախադպրոցական տարիքի երեխաների հոգեկան զարգացման

առանձնահատկությունները տարիքային տարբեր շրջափուլերում, տարիքային ճգնաժամեր,

բ. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և անձի ձևավորման գործոնները,

գ. Ճանաչողական հետաքրքրությունների ձևավորումը նախադպրոցական տարիքում,

դ. Իսաղի դերը նախադպրոցականի հոգեկանի զարգացման գործում,

ե. Խմբի արդյունավետ կառավարում և սաների հաղորդակցություն,

զ. Դպրոցի նախապատրաստման հիմնախնդիրը,

է. Ծնողավարության հմտություններ:

14) «Համընդհանուր ներառում» բաժնի բովանդակությունը.

ա. Ներառական կրթության փաստափեղք ընկալում: Ներառական կրթության իրավական կարգավորումներ,

բ. Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական կարիքների բազմազանությունը, դրանց բացահայտումն ու գնահատումը,

գ. Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նախադպրոցական, տարածքային և հանրապետական մակարդակներ,

դ. Ներառող ուսումնադաստիարակչական աշխատանքների ռազմավարություններ, մեթոդներ, մոտեցումներ,

ե. Կրթական ծրագրերի հարմարեցումներ, տարբերակված ուսումնադաստիարակչական աշխատանքներ, անհատական ուսուցման և զարգացման պլանավորում,

զ. Համագործակցությունն ու փոխհարաբերությունները ներառական կրթության համատեքստում:

15) «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական արդյունքների գնահատում» բաժնի բովանդակությունը.

ա. Սաների կրթության և զարգացման արդյունքների գնահատում. նպատակ, խնդիրներ, տեսակներ և ձևեր,

բ. Ձևավորող գնահատում. նպատակ, խնդիրներ, ձևեր և գործիքներ,

գ. Նախադպրոցական կրթության բովանդակության ծրագրային բաղադրիչներում ձևավորող գնահատման գործիքների տեղայնացում,

16) «Նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաներ» բաժնի բովանդակությունը.

ա. Նախադպրոցական մանկավարժության հասկացությունների համակարգը,

բ. Նախադպրոցական մանկավարժության հիմնախնդիրները,

գ. Նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակության բովանդակությունն ու մեթոդիկան,

դ. Խոսքի զարգացման, մաթեմատիկական տարրական պատկերացումների, ինձ շրջապատող աշխարհի, երաժշտության, ֆիզիկական դաստիարակության, կերպարվեստ և կառուցողական աշխատանքի մեթոդիկաներ,

ե. Նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հմտություններ, գործնական կարողություններ ձևավորող և ստեղծագործական մտածողությունը զարգացնող առաջադրանքների կիրառումը,

զ. Փոխգործուն ուսուցման, խմբային առաջադրանքների մանկավարժական վերլուծությունը: Մանկավարժության ժամանակակից մեթոդներ և ռազմավարություններ,

է. Ժամանակակից մանկավարժերին ներկայացվող պահանջները՝ փափուկ հմտություններ, մանկավարժական ռեֆլեքսիա: Մեդիագրագիտություն:

6. Մանկավարժական աշխատողների վերապատրաստման օրինակելի ծրագրի ուսումնառության վերջնարդյունքները

17) «Նախադպրոցական կրթության բնագավառի օրենսդրություն » բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. Մանկավարժական աշխատողը տիրապետում է իր և սաների իրավունքների պաշտպանության նորմերին:

բ. Մանկավարժական աշխատողը կարողանում է ներկայացնել նախադպրոցական պետական կրթական չափորոշիչ կառուցվածքային գլխավոր բաղադրիչները:

գ. Մանկավարժական աշխատողը կարողանում է ներկայացնել նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեության առարկան և նպատակը:

դ. Մանկավարժական աշխատողը կարողանում է ներկայացնել նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնային պարտականությունները:

18) «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը կրթական գործընթացում» բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. Մանկավարժական աշխատողը կարողանում է տեքստային խմբագրիչում հավաքել և ձևավորել տեքստեր, ստեղծել աղյուսակներ, փնտրել և փոխարինել տեքստը, ստեղծել ավտոմատ ցանկեր:

բ. Մանկավարժական աշխատողը կարողանում է ստեղծել շնորհանդեսներ, ձևավորել դրանք, տեղադրել նկարներ և տեքստեր, ստեղծել հիպերհղումներ, անիմացիաներ, ստեղծել ցանակացած ուղղությամբ անիմացիոն շարժում, տեղադրել գործողության (Action Buttons) կոճակներ:

գ. Մանկավարժական աշխատողը կարողանում է ստեղծել էլեկտրոնային փոստ, գրել նամակ, ճիշտ ձևակերպել վերնագիրը և բովանդակությունը, կցել ֆայլեր:

դ. Մանկավարժական աշխատողը գիտի էլեկտրոնային կրթական պաշարներ ստեղծելու համար նախատեսված առցանց գործիքների կիրառման հնարավորությունները:

ե. Մանկավարժական աշխատողը կարողանում է աշխատել կրթության կառավարման միասնական համակարգում:

զ. Մանկավարժական աշխատողը գիտի ուսումնադաստիարակչական աշխատանքներում էլեկտրոնային կրթական պաշարների դերը ներկա կրթական համակարգում:

է. Մանկավարժական աշխատողը կարողանում է օգտվել առցանց կրթական կայքերի գործիքներից, դրանց միջոցով կազմակերպել կրթական գործընթացը:

թ. Մանկավարժական աշխատողը կարողանում է օգտվել պաշարների շտեմարանից և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի բլոգից, գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

ժ. Մանկավարժական աշխատողը կարողանում է պլանավորել իր մանկավարժական գործունեությունը և սահմանել նպատակներ՝ հաշվի առնելով սաների անհատական կրթական առանձնահատկությունները էլեկտրոնային կրթական պաշարների կիրառման գործընթացում:

19) «Տարիքային հոգեբանություն» բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. Մանկավարժական աշխատողը գիտի նախադպրոցական տարիքի երեխաների տարիքային ընդհանուր բնութագիրը և հոգեկան զարգացման առանձնահատկությունները տարիքային տարբեր փուլերում:

բ. Մանկավարժական աշխատողը գիտի նախադպրոցական տարիքի երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման տարիքային առանձնահատկությունները:

գ. Մանկավարժական աշխատողը կարողանում է, սաների տարիքային ընդհանուր բնութագրին համապատասխան, իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթաց:

դ. Մանկավարժական աշխատողը կարողանում է ներկայացնել և կիրառել սաների ճանաչողական հետաքրքրությունների բացահայտմանն ու զարգացմանն ուղղված մեթոդներ:

ե. Մանկավարժական աշխատողը կարողանում է պլանավորել և իրականացնել խումբն արդյունավետ կառավարելու, բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ապահովելու և սաների հետ արդյունավետ հաղորդակցվելու գործողություններ, ձևավորել սաների՝ միմյանց հետ հաղորդակցվելու կարողություններ:

զ. Մանկավարժական աշխատողը գիտի սանին՝ դպրոցին նախապատրաստելու ուղղությունները և ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնում է դպրոցական ուսուցման պատրաստվածության օրինաչափությունների հաշվառմամբ:

է. Մանկավարժական աշխատողը կարողանում է երեխայի զարգացմանը, ուսուցմանը և դաստիարակությանն առնչվող հարցերի քննարկման նպատակով տարբեր ձևաչափերով կազմակերպել ծնողների հետ արդյունավետ հանդիպումներ:

20) «Համընդհանուր ներառում» բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. Մանկավարժական աշխատողը կարող է մեկնաբանել ներառական կրթության կարևորությունը մարդու իրավունքների տեսանկյունից, թվարկել իրականացման հիմնական սկզբունքները:

բ. Մանկավարժական աշխատողը գիտի ներառական կրթության կազմակերպումը կարգավորող իրավական ակտերի հիմնական դրույթները:

գ. Մանկավարժական աշխատողը գիտի հաճախ հանդիպող կրթական կարիքների առանձնահատկությունները, կարող է բացահայտել և ճանաչել սաների կրթական կարիքները:

դ. Մանկավարժական աշխատողը գիտի կրթական գործընթացի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասնակիցների համագործակցության շրջանակը:

ե. Մանկավարժական աշխատողը կարող է կիրառել նախադպրոցական մակարդակի գնահատման գործիքակազմը:

գ. Մանկավարժական աշխատողը կարող է վերհանել կրթական գործընթացում սանի լիարժեք մասնակցության սահմանափակումները և դրանց հաղթահարմանը խթանող գործոնները:

է. Մանկավարժական աշխատողը կարող է պլանավորել պարապմունքն այնպես, որ բոլոր սաները պարապմունքի տարբեր փուլերում մասնակցություն ունենան:

ը. Մանկավարժական աշխատողը գիտի, թե ինչպիսի հարմարեցումներ են անհրաժեշտ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանի կրթական գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար:

21) «Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական արդյունքների գնահատում» բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. Մանկավարժական աշխատողը կարող է ներկայացնել սաների կրթության և զարգացման արդյունքների գնահատման նպատակը, խնդիրները, տեսակները և ձևերը:

բ. Մանկավարժական աշխատողը կարող է ներկայացնել ձևավորող գնահատման նպատակը, խնդիրները և ձևերը:

գ. Մանկավարժական աշխատողը կարող է կազմել և տեղայնացնել ձևավորող գնահատման գործիքները ծրագրային բաղադրիչներում:

22) «Նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաներ» բաժնի ուսումնառության վերջնարդյունքները.

ա. Մանկավարժական աշխատողը կարող է ներկայացնել նախադպրոցական մանկավարժության հասկացությունների համակարգը, մեկնաբանել նախադպրոցական մանկավարժության հիմնախնդիրները.

բ. Մանկավարժական աշխատողը կարող է կազմակերպել ուսումնադաստիարակչական աշխատանքները՝ նախադպրոցական մանկավարժության մեթոդիկաների պահանջների հաշվառմամբ:

գ. Մանկավարժական աշխատողը կարող է կազմակերպել սաների կանոնակարգային պահերը և գործունեության տարբեր ձևերը,

դ. Մանկավարժական աշխատողը կարող է հստակ ձևակերպել պարապմունքի նպատակը, խնդիրները, ընտրել տվյալ թեմայի ուսուցման արդյունավետ մեթոդներ.

ե. Մանկավարժական աշխատողը կարող է իրականացնել գործնական, նախագծային, հետազոտական աշխատանքներ,

զ. Մանկավարժական աշխատողը կարող է սաների մոտ զարգացնել ստեղծագործականության քննական մտածողության, մեդիագրագիտության, խնդիրների լուծման, որոշումների կայացման, սովորելու հմտություններ:

7. Մանկավարժական աշխատողների վերապատրաստման օրինակելի ծրագրի հիման վրա կազմված մոդուլին ներկայացվող պահանջները

23) Օրինակելի ծրագրի հիման վրա կազմված մոդուլում հստակ նշվում է, թե ինչ բաժիններից է այն կազմված, ներկայացվում է թեմատիկ պլանը, թեմայի նպատակը և վերջնարդյունքը, ընդհանուր, տեսական և գործնական աշխատանքներին հատկացված ժամաքանակը:

24) Ներկայացվում են յուրաքանչյուր բաժնի համար նախատեսված բաշխման նյութը, աշխատանքների իրականացման մեթոդները և գրականության ցանկը:

25) Վերապատրաստման օրինակելի ծրագրի՝ «Նախադպրոցական դաստիարակության մեթոդիկաներ» բաժնի պահանջները հաշվի առնելով՝ մոդուլում առանձնացվում են մեթոդիստների, դաստիարակների, երաժշտության դաստիարակների և ֆիզկուլտուրայի հրահանգիչների համար նախատեսված դասընթացի թեմաները.

ա. մեթոդիստների և դաստիարակների համար կազմակերպվող դասընթացը ներառում է բաժիններ բոլոր մեթոդիկաներից, երաժշտության դաստիարակների և ֆիզկուլտուրայի հրահանգիչների համար կազմակերպվող՝ համապատասխան մեթոդիկաներից:

բ. մեթոդիստների համար նախատեսված դասընթացում ներառվում են ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական կազմակերպման և վերահսկողության ու մանկավարժական համակազմի շարունակական մասնագիտական զարգացման համար կազմակերպվող աշխատանքի ձևերի վերաբերյալ թեմաներ:

գ. մոդուլում ներառվում են դաստիարակների և երաժշտության դաստիարակների, դաստիարակների և ֆիզկուլտուրայի հրահանգիչների համագործակցության առանձնահատկությունները, երաժշտության և ֆիզկուլտուրայի պարապմունքների ընթացքում դաստիարակների գործունեությանը ներկայացվող պահանջները:

26) Դասընթացի ընթացքում օգտագործվող ուսումնական նյութերի փաթեթը դասընթացի ավարտից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, տրամադրվում են վերապատրաստված մանկավարժական աշխատողներին և «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամին՝ վերապատրաստումների կատարման ընթացքի և աղյուսների նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու նպատակով:

8. Հետազոտական աշխատանքի կառուցվածքը

27) Հետազոտական աշխատանքը շարադրվում է տպագիր, որի ծավալը կարող է տատանվել 15-20 էջի սահմաններում, տառատեսակը՝ Unicode, տառաչափը՝ 12, տողերի միջակայքը՝ 1,5:

28) Հետազոտական աշխատանքն պետք է ունենա տիտղոսաթերթ, բովանդակություն, ներածություն (պետք է հիմնավորվի ընտրված թեմայի կարևորությունը, հստակ ձևակերպվի աշխատանքի նպատակը), գլուխներ, եզրակացություն, առաջարկություններ, օգտագործված գրականության ցանկ:

29) Հետազոտական աշխատանքի տեքստը շարադրելիս անհրաժեշտ է հղում կատարել այն աղբյուրներին, որոնցից փոխառնվել են օգտագործած նյութերը:

9. Հետազոտական աշխատանքի առաջարկվող թեմաները

30) Մանկավարժական աշխատողի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորումը՝ նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչն համապատասխան,

31) Սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումը և ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը».

32) Սաների մեջ ինքնուրույնության, նախաձեռնողականության և ստեղծագործական ունակությունների զարգացումը,

33) Սաների իրավունքների ու ազատությունների, պատվի ու արժանապատվության պաշտպանությունը,

34) Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը,

35) Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների (նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում,

36) Մանկավարժական աշխատողի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով,

37) Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում,

- 38) Մեթոդամերի, խորհրդատվական քննարկումների դերն ու նշանակությունը որպես կրթական աշխատանքների արդյունավետության բարձրացման միջոց,
- 39) Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում,
- 40) Սաների հայրենաճանաչողության ձևավորման կարևորությունը,
- 41) Նախադպրոցականի կարողունակությունների ձևավորման հիմնահարցը,
- 42) Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում,
- 43) Երաժշտադիդակտիկ խաղերը որպես երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց,
- 44) Երաժշտության ունկնդրումը որպես երեխայի երաժշտագեղագիտական ճաշակի զարգացման միջոց,
- 45) Երաժշտության դաստիարակի և խմբի դաստիարակի համագործակցության ձևերը,
- 46) Երաժշտադիմական վարժությունները որպես երեխայի դիմազգացողության միջոց,
- 47) Երաժշտության պարապմունքների դերը երեխայի խոսքի զարգացման գործում,
- 48) Երաժշտական խմբային աշխատանքները որպես երեխայի համագործակցային և հաղորդակցական կարողությունների զարգացման միջոց:

10. Ավարտական հետազոտական աշխատանքի գնահատման ուրբիկ¹

	Ներկայացվող պահանջներ	Միավոր
1.	Թեմայի ճիշտ ընտրություն, արդիականություն (կոնկրետ մանկավարժական խնդիր, ծրագրային նյութ)	
2.	Թեմայի բովանդակության գիտական ու հասկանալի շարադրանք	
3.	Որոնողական, ստեղծագործական, հետազոտական կարողությունների դրսևորումներ	

¹ Ռուբրիկի 1-10-րդ հարցերից յուրաքանչյուրը գնահատել 1-5 միավորով, վերջում՝ հաշվել ընդհանուր միավորը և բերել 10-միավորանոց սանդղակի: Այսինքն՝ 10 հարցերի պատասխանների գումարը՝ ընդհանուր միավորը, բազմապատկել 0,2-ով և ստացած թվանշանը համարել վերջնական գնահատական:

Ստացված գնահատականի հիման վրա տրամադրել միավորներ՝

1-4 դեպքում՝ 0 միավոր,

5-7 դեպքում՝ 1 միավոր,

8-10 դեպքում՝ 2 միավոր:

4.	Իյուստրացիաներ, գրաֆիկական պատկերներ, ցուցակներ, սխեմաներ, քարտեր, դիդակտիկ այլ պարագաներ, տեսանյութեր, ուսումնական և լրացուցիչ նյութերի պատրաստում:	
5.	Գիտական ակադեմիական բարեխղճություն (հղումներ, մեջբերումներ)	
6.	Սեփական փորձի, տեսակետի, մեկնաբանությունների, դիրքորոշման, վերաբերմունքի, ստեղծագործական ու քննադատական մտածողության առկայություն, հիմնավորվածություն ու փաստարկվածություն	
7.	Պահանջվող ծավալին համապատասխանություն (15-20 տպագիր էջ)	
8.	Տեխնիկական չափանիշներին համապատասխանություն (տառատեսակ, տողերի միջակայք, տառաչափ և այլն)	
9.	Կառուցվածքի համապատասխանություն (նախաբան, բովանդակության ցանկ, բաժիններ ու ենթաբաժիններ, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ, հավելվածներ)	
10.	Հետազոտական աշխատանքի բանավոր պաշտպանությունը	
	Ընդհանուր միավորը	